ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈւՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁևԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Լիանա Պետրոսյան

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դասագրքերում ընդգրկված նյութը զարգանում է աստիճանաբար `պարզից դեպի բարդ,ինչպես մեկ ընդհանուր ,համապարփակ կառույց ,ուր յուրաքանչյուր աստիճան իր նպատակներով և խնդիրներով հաջորդում է նախորդին և ապահովում էուսուցման շարունակությունը:

Հաշվի առնելով այն կարևոր փաստը , որ լեզվի իմացությունը պետքէ նպաստի անհատի աշխարհաընկալման կազմավորմանըև դառնա հաղորդակցման միջոց, հեղինակները փորձ են կատարել ուսումնական նյութը ներկայացնել ըստ խոսքային գործունեության տեսակների ,որոնցից յուրաքանչյուրը ծառայում էբանավոր ևգրավոր խոսքի զարգացմանը ը համապատասխան հմտություններրի ու կարողությունների ձևավորմանը թեմատիկ աշխարհի ներքո: Այսպիսի մոտեցումը զգալիորեն հեշտացնում է ուսուցչի աշխատանքը ևնյութի մատուցումը կազմակերպելու համար:

Առաջադրանքներում ապահովում են ներմուծվող նյութի ընկալման մատչելիությունը նաշակերտների տարիքային առանձնահատկություններից բղող հետաքրքրությունների ոլորտը:

օրինակ - Մանկական աշղարհը 11-12տարեկան երեխաների համար դեռ հեքիաթային հերոսների ևնրանց բարիկամ չար արարքներիաշխարհ է:

6-7 միավոր երկրորդ կարգի բարդության նյութը կամուրջ էդառնում միջին դպրոցի ստորին և վերին փուլերի միջև: Այն դեռևս թողնելով աշակերտին հեքիաթների աշխարհում,նախապատրաստում էնրա մուտքը ուսումնասիրվող լեզվի երկիր: Բանավեր խոսքի ենրաբաժինները ներմուծում են ժամանակակից լեզվական նյութ –բառապաշարև դարձվածաբանական կառուցվածքներ կենցաղային նկարագրող թեմաների միջոցով: թռուցիկ ընթերցանության տեքտերը զետեղված են բանավոր խոսքի ենթաբաժնում: օրինակ – միջին բարդության բանավոր խոսքի նյութը ներառված է ընդհանուր կենցաղային թեմաներիմիջոցով ,որոնք անմիջականորեն կապված են տվյալ դասի ընթերցանանական կամքերական նյութի հետ :

Միձին բանդության քերականական նյութւ դասերի ներսում ներկայացված է սխեմաների ևկաղապարների ձևով,իսկ դրանց տեքստային տարբերակները ուսուցչի ձեռնարկեւմ; Երրորդ կարգի բարդյության նյութը հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը ,որ նյուրը աստիճանաբար բարդանում է ևպետքէ բացատրվի մայրենի լեզվով.

Ահա ինչու ձեռնանկում չի նկարագրվում յուրաքանչյուր վարժություն:

# ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անզնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:
Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:
Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:
Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական

միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»1:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»2:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը մի ջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այնպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն

վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:
Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝
1 Տես՝ Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 22 էջ:
2 Տես՝ նույն տեղում, 64 էջ:
Ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:
Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անհամրելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:
Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն

նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը:
Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:
Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»3:
Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում

աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:
Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:
«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»

# ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լեզվի գործնական տիրապետմանը ներկայացվող պահանջները թեմատիկական և քերականական նյութը որոնց միջոցով պետք էզարգանան ոնակությունները և հմտությունները: Դասավանդող ծրագրերը բաղկացած են հետնյալ բաժիններից. ուսուցման նպատակները , պահանջները հմտությունների վերաբերյալ թեմատիկա նլեզվական նյութ;ՀՀ կրթության նախարարությունը միջազգային կապեր էհաստատում այլ պետությունների հետ /Բուլոնյան ծրագիր 2004/ օտար լեզվի դասավանդումը դպրոցում ստանում է առանձնահատուկ նշանակություն ; Բանավոր ղոքի նրնթեթցանության տիրապետումը հեշտացնում էայլ ժողովուրդների հետ շփումները,ապահովում օտար լեզվի տիրապետման ինքնուրույնաբար աշխատելու ունակությունը; Օտար լեզվի դասավանդումը դպրոցում հետապնդում է գործնական, դաստիրակչական և կրթական նպատակներ, ըստ որում սովորողների գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման ընթացքում; Ըստ գործնական աշխատանքների սովորողներըպետք էկարողանան կապակցված, զրագետ ընթերցանություն , գրավոր խոսք ,թարգմանություն ապահովել, զրույց /բաց դաս/ վարել որոշակի թեմաներերի կարդացածի,լսածի ,տեսածի շուրջ նհասկանալ բանավոր
և գրավոր խոսքը;

Անգլերենը ,որպես օտար լեզվի ուսուցում ,իրականացվում էսովորողների ընդհանուր կրթությանը ,խոսքն ումտածողության զարգացմանը;

Դպրոցականները արժեհամակարգի ձևավորման դասավանդման ընթացքում որոշակի պատկերացում են ձեռք բերում տվյալ լեզվի մասին , ըմբռնում որոշառանձնահատկությունների ,որոնցով այն տարբերվում է իրենց մայրենի լեզվից ։ Դա նպաստում է սովորողների լեզվաբանական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն.

1 Լսելով հասկանալ հիմնականում ուսումնասիրվածնյութի վրա կառուցված բանավոր խոսք.

2 2տողոսից ոչ ավելի անծանեթ բառեր 2-4րոպե,

Զրույց վարել 10-15 նաղաղասության ծրագրից ծանոթ թեմատիկայի սահմաններում 5-7րոպե;

3 1-2 րոպեյում շատ արագ կարդալ նհասկանալ բառարանից 300-350բառ;

4 Ինքնուրույն կարդալ և հասկանալ օտար լեզվով 10 րոպեյում 1500-2000 բառ հասարակական-քաղաքական ,գիտական նգեղարվեստական բառեր;

5 Գրավորը ուսումնական կարևոր միջոց ;որը նպաստում էբանավոր խոսքի ,ընթերցանության ունակությունների նհմտությունների զարգացմանը ,ինչպես նաև լեզվական նյութի յուրացմանը ։

Գրավոր խոսքի նպատակը սահմանափակ է;Աշակերտներից պահանջվում էգրել թեստեր էլեկտրոնային նամակներ,կարճ պատմություններ , ուսուցման ընթացքում կատարել գրավոր տարբեր վարժություններ;

ՌԻնկնդելու ունակություններին վերաբերող պահանջները դասարանից դասարան տարբերվում են լեզվական նյութի բարդացմամբ ,և ընկալման պայմաններով /խոսքի տեմպը ,տեսողական հենակետի առկայությունը և բացակայությունը խոսողի ձայնի ծանոթ կամ անծանոթ լինելը;

Առանձնահատկությունները;

Օտար լեզուն լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարրն է,ու ստի դրա ուսումնասիրությունը նպաստում է փոխըմբռմանը;

օտար լեզվի և մյուս առարկաների ինտեգրումը նմիջառարկայական կապերը նպաստում են երեխայի մտահորիզոնի զարգացմանը, զարգացնում է աշակերտի հաղորդակցական-ճանաչողական մոտեցումները ; Օտար լեզվի միջոցով սովորողների ուսուցումը , դաստիրակությունը և զարգացումը պետք է ընթանա աշակերտակենտրոն, գործնեության վրա հիմնված , հաղորդակցական – ճանաչողական մոտեցումների իրագործմամբ:Մ անկավարժական գործնթացի կենտրոնում աշակերտն է `իր հնարավորություններով, պահանջմունքներով , տարիքային և անհատական առանձնահատկություններով , ձեռքբերումններով , որոնք պետք է գիտակցի ուսուցիչը դրսեվորելով հանդուրժողական մոտեցում; Օտար լեզվով հաղորդակցության հիմքերի ստեղծում, անձի հոգևոր և մտավոր զարգացում; Օտար լեզուների ուսումնասիրության ա դյունքում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ; Օտար լեզուննների ուսուցման արդյունավետության կարևորագույն նախադրյալներից մեկը նրա նպատակաուղղվածությունն է,այսինքն օտար լեզուննների ուսուցման սկզբունքները;Օտար լեզու պետք է բավարարի սովորողների հետաքրքրությունները ,պահանջմունքները քյանքի հետագա գործնեության համար;1նպաստել սովորողների մասնագիտական կողնորոշմանը 2օգնել նրանց հետագայում ստեղծագործելու նպատակով 3 հնարավորություն ընձեռել նրանց հետագայեւմ ուսումը շարունակելու վերաբերյալ. Մասնագիտական հոսքերում հատկապես կարևորում է հանրամշակութային , այդ թվում նաև հանրալեզվաբանական իրազեկությունը, որը ներառում էլեզվի օգտագործման սոցիալական գործոնի հետ առնչվող գիտելիքներն ու ունակությունները ,որոնք անմիջականորեն ազդում են տարբեր մշակույթների ներկայացուչիցների միջանձնային հաղորդակցության վրա; Վերոհիշյալ մոտեցումների նսկզբունքների հիմանվրա առաջարկվում է առարկայական ծրագրեր ,որոնք հիմք են ըդառնալուհետագա թեմատիկ պլանավորման համար; Ընթերցանությունը գիտելիքի ստեղծման հիմնական եղանակն է, որի հիման վրա զարգանում են խոսքային մյուս հմտությունները: Ընթերցանության հանձնարարություններով ,որոնք միտված են ընթերցած նյութի մասին ունեցած աշակերտների գիտելիքները և կենտրոցրեք ուշադրությունը `նպատակային ընկալման համար: Աշակերտները ամենից արդյունավետ սովորում են այն ժամանակ են լավ սովորում, երբ դառնում են ակտիվ ու գործնական ընթերցնողներ: Խորհուրդ ենք տալիս կիրառել այնպիսի մեթոդներ ,ինչպիսիք են, օրինակ՝ գաղափարների մտագրողը, քննարկումների խթանումը, գրելու խթանումը նայլն: Հմտությունները ստուգելու համար կիրառվում են հետնյալ առաջադրանքները

1. բազմակի ընտրության առաջադրանքներ,
2. բաց թողած բառերով առաջադրանքներ,

3. ճիշտ/սղալ,
4. հարց /պատասխան,
5. պարզ վերարտադրություն,
6. տեքստի բովանդակության սխեմատիկ պլանի կազմում,
7. տեքստի խառը հատվածները ճիշտ հաջորդականությամբ դասավորել և այլն:

Դասագրքերում ընդգրկված են տեղեկատվական բնույթի տարբեր նյութի, թռուցիկ ընթերցանության համար նախատեսված տեքստեր. It’s a lwng story խորագրի ներքո տրվում է հայտնի անգլիական կամ ամերիկյան գրողների ստեղծագործություններից կրճատված ևպարզեցված որևէ հատված` դրան նախորդող ևհաջորդող հանձնարարություններով, որոնց նպատակն է ամրապնդել բառապաշարը: օրինակ` Գրատախտակին գրել So Many Countries, Somany customs ասացվածքը ևաշակերտներին հարցրեք, թե որն էայդ ասացվածքի նշանակությունը: Աշխատել ով այս թեմայի շուրջ` ստանում են նոր տեղեկություններ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի ևայլ երկրների վերաբերյալ: Որպես քերականական նյութ` բացատրել հետևյալ մակբայների իմաստային տարբերությունները` late –lately.Նշեք, որ այս բնույթի ածական- մակբայ զույգերը կարելի է իրարից տարբերել ըստնախադասության մեջ դրանց զբաղեցրած իրենց տեղի. ածականը` գոյականից առաջ, մակբայը` բայից հետո; Աշակերտների ուշադրությունը կենտրոնացրեց այն բանի վրա, որ այդ դեպքում ածականն ու մնում են անփոփոխ: Սովորեցրեք աշակերտներին, որ smell, taste,sound,feel, հետո օգտագործվում է ոչ թե մակբայ, այլ ածական: Այս դասի ընթացքում կարելի է նաև աշակերտներին բացատրել բոլորովին նոր քերականական այնպիսի երևույթ, ինչպիսին է ածականի փոխակերպումը գոյականի: Առաջարկն ուղղված է ժամանակից անգլ երենին: Նշված բնույթի ածականները, երբ փոխակերպվում են գոյականի, օգտագործվում են որոշիչ հոդի հետ հոգնակի թվի գոյականի նշանակությամբ; Որպես օրինակ առաջարկեք համեմատել հետևյալ նախադասությունները. The young must help the old . A young man helped an old ledy. Վերջին տարիներին անգլ երենի գոյականների ստացական հոլովի օգտագործման միտում էնկատվում անշունչ առարկաների օգտագործման դեպքում; Աշակերտներին ծանոթացնել նաև այն երևույթի հետ, որ իրենք ժամանակակից գրականության մեջ կարող են հանդիպել այնպիսի դեպքերի – the car’s door. Օրինակ Welcome to Armenia. Այս դասի ընթացքում աշակերտները խորացնում են իրենց գիտելիքները անհրաժեշտ բառապաշարը Հայաստանի պատմության և շրջակա միջավայրի մասին զրուցել ու համար: Հանձնարարել տանը կարդալ հայկական ազգանունների ծագման վերաբերյալ տեքստը, քննարկում կազմակերպեք նախօրոք պատրաստել ով թեմային վերաբերող հարցեր: Ձեր ընկերներից կամ ծանոթներից մեկն ուզում էգալ Հայաստան; Նամակ գչ եք նրան ևխորհուրդ տվեք հետևյալ կետերի վերաբերյալ. 1որտեղ իջևանել, 2հագուստ3եղանակ 4ուտել իք ևղմիչ ք, տեսարժան վայրեր,5զվարճալի քներ, գումար; Դասարանում կազմակերպել դերախաղ` դասարանը բաժանել ով խմբերով, որտեղ յուրաքանչյուր խումբ բաղկացած է էքսկուրսավարից և զբոսաշրջիկնեևից: Բացատրել աշակերտներին նախադասություն կառուցել ու կառուցել ուկանոններից մեկը` երկու գործողության առկայության դեպքում; Եվ որպես տնային առաջադրանք` հանձնարարեք վարժություններ: Հետագայում աշակերտների գիտելիքները և բառապաշարն այս թեմայի շրջանակներում խորացնել ու նպատակով հանձնարարեք տեքստեր հայ և այլ ազգի ճանաչված մարդկանց մասին` նպատակ ունենալով աշակերտներին ծանոթացնել հայ ևանգլ ախոս երկրների երկրների հայտնի դեմքերի հետ: Հանձնարարել Վիլյամ Սարոյանի գրած տողերը հայ ազգի մասին:



Դասի ընթացքում տեսաֆիլմերի միջոցով պոժեհամակարգի ձևավորումը.

Օտար լեզվի դասի ընթացքում կարևոր նախապայմաններից մեկը SRS սարքավորումների կիրառումն է, որը հնարավորություն էտալիս տվյալ մշակույթին ծանոթանալով սովորել այդ մշակույթը կրողների լեզուն: Լեզվակիրների ևնրանց մշակույթի հետանմիջական շփման բացակայությունը

մասամբ կարելի է լրացնել տեխնիկական միջոցներով:
Հայտնի է, որ ցանկացած իրողություն ավելի լավ է մտապահվում և ամրագրվում անհատի գիտակցության մեջ, երբ այն զուգորդվում է որևէ նշանակալի իրադարձությամբ և երբ այդ գործընթացին հնարավորինս մեծ թվով զգայարաններ են մասնակցում:
Միաժամանակ տեսնել և լսելն, իհարկե, ավելի արդյունավետ է, քան միայն լսելը: Սակայն հայտնի է նաև, որ մարդու բնությունը թույլ չի տալիս, որպեսզի նրա բոլոր զգայարանները միաժամանակ հավասարապես գործուն մասնակցեն ճանաչողության գործընթացին;
օտար լեզվով ֆիլմ դիտելիս հատկապես մեծ լարվածություն է պահանջվում խոսքի ընկալման համար, իսկ պատկերները, դիմախաղը, խորհրդանշաններն ու ռեժիսորի հնարքները հաճախ բավարարում են ֆիլմի հիմնական բովանդակությունը հասկանալու: Ուստի լսողական ուշադրությունն ակամա գնալով նվազում է և արդյունքում օտար լեզվով տեսաֆիլմի դիտումը վերածվում է պարզապես հետաքրքիր ժամանցի; Ուրեմն, ինչ նպատակ ունի տեսաֆիլմի կիրառումը օտար լեզվի դասերին, եթե պատկերը երբեմն օգնում է հասկանալ խոսքը, իսկ երբեմն էլ խանգարում` որպեսզի սովորողը իր ուշադրությունը խոսքին հետևելու վրա սևեռի:
Ճիշտ ընտրված տեսաֆիլմը ոչ միայն խոսելու հարուստ նյութ է տալիս, այլ ապահովում է դասի ստեղծագործական պահը: Սովորողը կարող է իր սովորած և տեքստում կամ վարժություններում բազմաթիվ անգամներ կրկնված նյութը, ազատորեն արդեն առանց տեքստից կառչելու, կիրառել բոլորովին այլ ենթատեքստում, ամեն կենդանացնելով այն, ինչ մինչ այդ պարզապես դասանյութ էր:
Տեսաֆիլմերի հետ աշխատելիս սովորողը պետք է ունենա առավելագույն չափով ազատություն: Նա պետք է ազատ լինի իր դատողություններով և մեկնաբանություններով, կարողանա վիճաբանել, համաձայնել կամ չհամաձայնել ընկերների և ուսուցչի հետ
Ֆիլմի հետ աշխատանքը կարելի է բաժանել 3 մասի
1. աշխատանք մինչև ֆիլմի դիտումը;
2. աշխատանք ֆիլմը դիտելու ընթացքում;
3. աշխատանք ֆիլմը դիտելուց հետո;
Այս ամենից հետո կարելի է տալ հետևյալ հանձնարարությունը:
1. Դատել ասույթից` բնութագրել հերոսին,
2. փոխակերպել հետևյալ ասույթները և այլն:



ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Դասի պլանավորում Անգլերեն -4-րդ դասարան

Ենթաթեմա- Tom Thumb

Նպատակը –Զարգացնել օտար լեզվի  ճիշտ ընթերցանությունը,

տառակապակցությունների ճիշտ արտասանությունը բառի մեջ:

Դասի տիպը -  համակարգող  Խնդիրները- ճիշտ ընթերցանության և թարգմանության միջոցով ,

հասկանալ «մատնաչափիկը» թեմայի կարևորությունը և  դաստիրակչական նպատակը;

Վերջնարդյունքը- Սովորեցնել աշխատասիրություն ,ազնվություն ծնողների ,շրջապատի հանդեպ;

Տնային աշխատանք - կարդալ, թարգմանել, պատասխանել հարցերին:



ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Դասի պլանավորում  Անգլերեն 6-րդ դասարան

Ենթաթեմա –Շոտլանդացին և Անգլիական դատավորի դուստրը;

Նպատակը –Զարգացնել ճիշտ ընթերցանությունը նթարգմանությունը ,անգլիախոս  երկրների պոեմների ,թեմաների միջոցով ;

Դասի տիպը –Ճանաչողական

Խնդիրները- Շոտլանդացին պատմում է  իր հորը երազում տեսած  շատ կարևոր իրադարձության մասին,երջանկության մասին;

Վերջնարդյունք- Հասկանալ թեմայում բերված թևավոր խոսքերի  իմաստը նկարնորությունը;

Տնային աշխատանք - կարդալ, թարգմանել, պատասխանել հարցերին։



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի

մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան:

Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին: Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի: Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում:Ազգային գաղափարախոսությունն պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը,որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է

դառնա արժեհամակարգի ձևավորումը,իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային- հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էլիզա Ղազարյան /լեզվաբանական համալսարան./……………………………………
2. Ելենա Երզնկյան /օտար լեզունները հայաստանում./…………………………………
3. Աստվածատրյան Մ. Թերզյան Գ. Լեզուների իմացության համանրոպականհամակարգ. ……………………………………………………………………
4. Դպրոցների առարկայական չափորոշիչ և ծրագիր……………………………………
5. Սովորողների գնահատման հայեցակարգ , Հի Կգն ,Կրթական ծրագրերի կենտրոն…
6. Գ. Գասպարյան / ուսումնական ձեռնարկ./ ………………………………………………
7. Լուսինե Գրիգորյան /ուսուցչի ձեռնարկ./ …………………………………………………